ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 19, կիրակի.—Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Գարնանային օր է, ջերմ ու արևշող: Օրվա մեծ տոնի առթիվ Մայր տաճարը և նրա ամբողջ շրջափակը լցված են խուռներամ բազմությամբ:

Ժամը 11-ին հնչում են Մայր տաճարի զանգերը՝ ավետելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Սկսված է սուրբ պատարագը: Օրվա պատարագիչն է Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա գտնվելու ս. պատարագին: Թափորին ուղեկցում են Ստոկհոլմից, Արևմտյան Գերմանիայից, Ֆրանսիայից և այլ տեղերից Մայր Աթոռ ժամանած հարյուրավոր ուխտավորներ, որոնք երկյուղած բարեպաշտությամբ ներկա են լինում արարողությանը և ստանում ս. Հաղորդություն:

Պատարագը հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է. Ավագ խորան է բարձրանում Վեհափառ Հայրապետը և, շնորհավորելով ողջ հայության Զատիկը, խոսում է Հարության խորհրդին նվիրված Իր ոգեշունչ, բովանդակալից քարոզը, որը տպագրվել է Էջմիածին ամսագրի սույն համարում (էջ 3):

Նույն օրը, գիշերվա ժամը 12-ին, Նորին Սրբության քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որտեղ ընդունում է բազում շնորհավորանքներ, որոնց թվում նաև Երևանի ուսումնական տարբեր հաստատություններում սովորող սփյուռքահայ ուսանողների, որոնք աջահամբույրով ստանում են Վեհափառ Տիրոջ օրհնությունը:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին, Մայր Աթոռի միաբանությանն ու պատասխանատու աշխատողներին և շնորհավորում բոլոր ներկաների Ս. Զատիկը:

Հանուն ներկաների Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում է Տ. Սիոն արքեպ. Մանուկյանն ու բարի ճանապարհ մաղթում Նրան՝ դեպի Կենտրոնական և Արևմտյան Եվրոպա կատարելիք հովվական այցելության առթիվ:

Մայր տաճարում ս. պատարագին և զատկական ճաշկերույթին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ռ. Պարսամյանը, որը նույնպես բարի ճանապարհ է մաղթում Հայոց Հայրապետին:

Հաջորդ օրը, 20 ապրիլի, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը մեկնում է Մոսկվա՝ Իր ուղևորությունը շարունակելու համար դեպի Վիեննա, Ֆրանկֆուրտ, Մյունխեն և ապա Փարիզ: